08.02.2019թ.
գ. Ծաղկունք

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2018 թվականի փետրվարի 8-ին ժամը 15:00-ին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի մշակույթի տան դահլիճում կայացավ համայնքի բնակիչների ընդհանուր ժողով:
Ժողովին ներկա էին համայնքի ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակիցները և համայնքի բնակիչները:
Օրակարգում՝ Ծաղկունք համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան և տարվա ընթացքում կատարված գործունեության մասին:
Համայնքի ղեկավար Դավիթ Կարապետյանը ներկայացրեց 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքները ըստ բնագավառների, ինչպես նաև համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը և 2017 թվականի նկատմամբ համեմատական վերլուծությունը:

1. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2018 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են համայնքի շահերը տարբեր բնագավառներում՝ կադաստրի տարածքային ստորաբաժանում, անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, Ք.Կ.Ա.Գ. բաժնում միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով : Գումարվել է համայնքի ավագանու 11 նիստ, որից 5-ը արտահերթ, քննարկվել են համայնքի շահերին վերաբերվող հարցեր, ընդունվել է 42 որոշում. հաստատվել է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, սանիտարական մաքրման սխեման, համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, 2018 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու կարգը, քննարկվել և հաստատվել է 2018 թ. հողային հաշվեկշիռը, ինչպես նաև համայնքի շահերից բխող այլ հարցեր : Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է տարբեր բնույթի 43 որոշում, արձակվել է 25 կարգադրություն:
Ինչպես այնպես հետևողական աշխատանքների, այնպես էլ կազմակերպվող ընդունելությունների ընթացքում համայնքի բնակիչների կողմից ներկայացված խնդիրները և դիմումները բավարարվում են և տրվում առաջնահերթ լուծումներ: Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցել է թվով 59 բնակիչ, հատկացվել է 254 տեղեկանք, 8 բնակչի հատկացվել է բնութագիր, 2018 թվականի ընթացքում համայնքի

ակիչներից ստացվել են 88 տարբեր բնույթի դիմումներ, որոնք բավարարվել են և տրվել համապատասխան ընթացք: Քաղաքացիների կողմից այլ բողոքներ չեն եղել:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել 2018 թվականի ընթացքում համայնքի բյուջեի փոփոխությունները, բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակային հաղորդումները, կատարողականը: Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով տնօրինել է համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը:

Հաշվետու ժամանակաշրջանում, ըստ սեփական եկամտատեսակների հավաքագրվել և մուտքագրվել է՝ հողի հարկ – 5519,5 հազ. / հինգ միլիոն հինգ հարյուր տասնինը հազար հինգ հարյուր / դրամ, գույքահարկի մասով ընդամենը՝ 7.170,6 հազ. / յոթ միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր/ դրամ, հողի վարձակալությունից վճար՝ 437,2 հազ / չորս հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր/ դրամ , ընդամենը տեղական տուրքեր՝ 652,9 հազ. /վեց հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր / դրամ, տեղական վճարներ՝ 915,0 հազ /ինը հարյուր տասնհինգ հազար/ դրամ, որից՝ աղբահանության վճար 773,4 հազ. /յոթ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր/ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում համայնքի բյուջե է մուտքագրվել հողի օտարումից եկամուտ 5984,3 հազ. / հինգ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր / դրամ: Հշվետու տարվա ընթացքում պետական բյուջեի կողմից տրամադրվել է դոտացիա՝ 19292,0 հազ. /տասնինը միլոն երկու հարյուր իննսուներկու հազար/ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է հետևյալ ծախսերը՝ օրենսդիր և գործադիր մարմիններ՝ 20859,2 հազ. /քսան միլիոն ութ հարյուր հիսունինը հազար երկու հարյուր/ դրամ, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 750,0 հազ. /յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ, գյուղատնտեսություն՝ 218,4 հազ. /երկու հարյուր տասնութ հազար չորս հարյուր/ դրամ, շրջակա միջավայրի պաշտպանություն, աղբահանություն 996,0 հազ. /ինը հարյուր իննսունվեց հազար/ դրամ, հանգիստ մշակույթ և կրոն՝ 2186,0 հազ. /երկու միլիոն մեկ հարյուր ութսունվեց հազար/ դրամ, սոցիալական պաշտպանություն 2500,0 հազ. /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

3. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Օրենքով սահմանված կարգով վարվել է համայնքի զինապարտների գրանցամատյանը, դրա վերաբերյալ ցուցակները, աշխատանքներ են տարվել նախկինում զինվորական ծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարիատ ներկայացնելու գործում, զորակոչի համար ստացված ծանուցագրերը ժամանակին տրվել են հասցեատերերին: Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է կցագրման ենթակա 2003 թվականին ծնված պատանիների անվանացանկը:

Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Ապահովվել է համայնքի 4 զինակոչիկների անվճար երթևեկությունը <<Հայաստանի ԴՈՍԱԱՖ >> էջմիածնի ավտոդպրոցում սովորելու համար: Ուշադրության կենտրոնում են պարտադիր զինվորական ծառայության մեկնած զինակոչիկներն ու նրանց ընտանիքները: **2018թ. համայնքն իր մասնակցությունն է ունեցել ,, Շանթ 2018,, ուսումնավարժական հրամանատարային զորավարժություններին:**

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու տարվա ընթացքում համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել համայնքի շենքերի ու շինությունների նպատակային օգտագործմանը և պահպանմանը, տրամադրվել է նոր հասցեներ: Օրենքով սահմանված կարգով համաձայնեցվել է ճարտարապետաշինարարական նախագծերը, հաշվետու ժամանակահատվածում կառուցապատողներին տրամադրվել է 5 շինարարության, 1 քանդման թույլտվություն, 2 վերակառուցման համար շինարարության թույլտվություն, 1 տրված շինարարության թույլտվության գործողությունների ժամկետի երկարաձգում, ձևակերպվել է 1 շինարարության ավարտման ակտ և տրամադրվել 1 ավարտված շինարարության շահագործման թույլտվություն: Տրամադրվել է արտաքին գովազդ տեղադրելու 1 թույլտվություն:

Համայնքի ավագանու կողմից հաստատվել է համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց աղբահանության վճարների դրույքաչափերը և կնքվել համապատասխան պայմանագրեր: Կատարվել է ինչպես շրջակա միջավայրի պաշտպանության, այնպես էլ գյուղամիջյան առուների, ճամփեզրերի մաքրման աշխատանքներ: Սահմանված կարգով կազմվել է համայնքի սանիտարական մաքրման

սխեման, որը հաստատվել է համայնքի ավագանու կողմից: Համայնքի տարածքում շաբաթական մեկ անգամ կատարվում է աղբահանություն, որի համար կնքվել է աշխատանքային պայմանագիր:

2018 թվականի ապրիլի 14-ին, սեպտեմբերի 8-ին և սեպտեմբերի 15-ին համաձայն շաբաթօրյակի գործողությունների պլանի համայնքի վարչական տարածքում կազմակերպվել և անցկացվել է շաբաթօրյակ: Հմայնքի Հոկտեմբերյան և Սայաթ-Նովա փողոցների գիշերային լուսավորության հետ կապված անսարքությունները վերացնելու, նոր լուսատուներ ձեռքբերելու համար ծախսվել է 250.0 հազ. /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ գումար: Սահմանված կարգին համաձայն կազմակերպվել է համայնքի գերեզմանատան գործունեությունը, պահպանումն ու հսկողությունը:

5. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով 2018 թվականին օտարվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքեր: Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել համայնքի հողային հաշվեկշիռը:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքային ենթակայության ճանապարհների վրա իրավասության սահմաններում կազմակերպվել է ճանապարհային անվտանգ երթևեկությունը:

7. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանված կարգի՝ առևտրի և ծառայությունների բնագավառում տրվել է ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ:

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի վաճառքի համար թվով 2 թույլտվություն, հսկողություն է կատարվել նշված վայրերի հասարակական զուգարանների առկայության, սանիտարական մաքրման և օրենքի չափանիշներին համապատասխանելու մասով:

Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի, առևտրային կանոնների խախտման նկատմամբ: Առևտրի ոլորտում լուրջ հսկողություն է իրականացվել և տրվել է զգուշացում 16 տարին չլրացած պատանիներին ծխախոտի և ալկոհոլային խմիչքի վաճառքն արգելելու համար: Հսկողություն իրականացնելու ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

8. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համայնքում չկա դպրոց, մանկապարտեզը չի գործում, սակայն գրադարանն իր ամենօրյա գործունեությամբ նպաստում է համայնքի բնակչության ընթերցանության ապահովմանը: Իրականացվել է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, բոլոր դպրոցահասակ տարիքի երեխաները հաճախում են դպրոց,:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ.

1. Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի մեծահասակ կանանց , ուսուցչուհիներին, բուժաշխատողներին, համայնքապետարանում աշխատող կանանց և աղջիկներին տրվել են նվերներ:
2. Վերջին դասի /զանգի/ կապակցությամբ դպրոցում իրականացվող միջոցառման ժամանակ համայնքի շրջանավարտներին հանձնվել են հուշանվերներ:
3. 2018 թվականի ամռանը համայնքի բնակիչների համար Աղվերան հանգստի գոտում կազմակերպվել է էքսկուրսիա. ձեռք է բերվել սննդամթերք և հարակից ապրանքներ, որն էլ օգտագործվել է համայնքի բնակիչների ամառային մեկօրյա հանգիսը բնության գրկում կազմակերպելու և անցկացնելու համար:
4. 2018-2019թթ ուսումնական տարվա առաջին դասարան հաճախող աշակերտներին տրվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքների հավաքածուներ:
5. Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի կապակցությամբ համայնքում կազմակերպվել և անցկացվել է տոնական միջոցառումների շարք.
   - Հայաստանի Անկախության տոնին նվիրված ցուցահանդեսի կազմակերպում, որտեղ ցուցադրվում էր համայնքի տաղանդավոր և շնորհալի երեխաների ձեռքի աշխատանքները
   - Կավճանկարչության մրցույթ <<Հայաստանն իմ տունն է>> թեմայով
   - <<ԱրմՖայթինգ>> մարզական ակումբի սաների կողմից կազմակերպվել էր ներկայացում
   - Ծաղկեդրում զոհված ազատամարտիկի շիրմին:
6. Ամանորյա տոներին ընդառաջ համայնքի երեխաներն բաժանվել է ամանորյա նվերներ:

9. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Առողջապահության ոլորտում տարբեր ծրագրերի շրջանակներում համայնք են այցելում բժիշկ-մասնագետներ՝ ազգաբնակչության առողջական խնդիրները ստուգելու, համապատասխան բուժզննում իրականացնելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Համայնքի ղեկավարը մշտապես նպաստել է համայնքում գործող <<ԱրմՖայթինգ>> մարզական ակումբի և <<Մուայ թայ>> մարտարվեստի գործունեությանը, որոնք նպաստում են համայնքի երեխաների ֆիզիկական պատրաստվածությանը, առողջ ապրելակերպին և սպորտի զարգացմանը:

10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Տարիների փորձը ցույց է տալիս, որ բնակիչներն իրենց հոգսերի ու խնդիրների լուծման համար առաջին հերթին դիմում են համայնքապետարան: 2018 թվականի ընթացքում համայնքի բնակիչներից ստացված 88 տարաբնույթ դիմումների շարքում զգալի թիվ են կազմում դրամական օգնություն պարունակողները, որոնք բավարարվել են՝ տրամադրվելով դրամական օգնություն:

Այս ոլորտում սոցիալական վիճակի մեղմացմանն ուղղված աշխատանքները նպաստում են սոցիալական պայմանների բարելավմանը: 2018 թվականի ընթացքում շուրջ 58 սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն:

Որպես ֆինանսական աջակցություն 2018 թվականին <<Հայաստան>> Համահայկական հիմնադրամին համայնքը հատկացրել է 30.0 հազ /երեսուն հազար/ ՀՀ դրամ նվիրատվություն:

11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գյուղատնտեսության բնագավառում 2018 թվականի ընթացքում կազմակերպվել և անմիջական հսկողություն է իրականացվել ոռոգման ջրերի անխափան մատակարարումն իրականացնելու համար:

Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ: Անմիջական վերահսկողության և աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, գանրանացանի, գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի և աշնանացանի ընթացքի մասին հաշվետվությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2018 թվականը աշխատատար էր և հագեցած, կարողացանք համայնքի բյուջեի միջոցների հաշվին ապահովել համայնքապահպան գործունեություն: Չնայած ընթացիկ գործերին և իրականացված ծրագրերին (պետական միջոցների հաշվին իրականացվել է համայնքում նոր մանկապարտեզի շենքի կառուցման համար նախագծման աշխատանքները, համաձայնություն է տրվել համայնքի ոռոգման ներտնտեսային առավել քայքայված ցանցերի վերականգնման աշխատանքներին՝ շինարարական աշխատանքների արժեքի 10% համաֆինանսավորմամբ, որը կսկսվի 2019 թվականին), քիչ չեն նաև համայնքի խնդիրները, որոնք պահանջում են առաջնահերթ լուծումներ՝ գիշերային լուսավորություն, խմելու ջրի ներտնտեսային ցանցի նորոգում, փոխորինում, մշակույթի տան կապիտալ վերանորոգում, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում ներհամայնքային կյանքի վրա, բայց, վստահ եմ, որ համայնք-բնակիչ համագործակցության և երկուստեք պատասխանատվության շնորհիվ հնարավոր կլինի գրանցել ավելի լավ արդյունքներ և ունենալ առավել զարգացած համայնք:

Ծաղկունք համայնքի ղեկավար՝ Դավիթ Կարապետյան

08.02.2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Armավիրի մարզի Ծաղկունք համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը և համեմատական վերլուծությունը 2017 թվականի նկատմամբ

Ծաղկունք համայնքի 2018թ. տարվա ընթացքում հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը և 2017թ. նկատմամբ համեմատական վերլուծությունը .

2018թվականին վարչական բյուջեն ընդամենը հավաքագրվել է 33987.2 հազ. /երեսուներեք միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուրմ/ դրամ գումար, որը կազմում է բյուջեի 100.5 %-ը, 2017 թվականի նույն ժամանակաշրջանում հավաքագրվել էր 33318.4 հազ. /երեսուներեք միլիոն երեք հարյուր տասնութ հազար չորս հարյուր/ դրամ գումար:

Եկամտատեսակի անվանումը	2017թ.			2018թ.		
	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%
1.Հարկային եկամուտներ	**12377.0**	13388.2	108.1	12541.1	12690.2	101.1
1.1 Հողի հարկ	5200.0	5529.4	106.3	5300.0	5519.5	104,1
1.2 Գույքահարկ շինություններից	1300.0	1631.2	125.5	1441.1	1585.6	110.0
1.3 Գույքահարկ փոխադրամիջոց.	5877.0	6227.6	106.0	5800.0	5585.1	96.3
2. Ընդամենը տեղական տուրք	**428.0**	**200.0**	**46.7**	**398.0**	**652.9**	**164.0**
Շենքերի շինարարության թույլտվ.	30.0	60.0	200	30.0	155.0	516.6
Շինությունների վերակառուցման և արդիականցման համար	3.0	0	0	3.0	0	0
Օբյեկտների քանդման համար	5.0	0	0	5.0	5.0	100.0
Համայն.տարած.ոգելից խմիչքի, ծխախոտի վաճառքի և հանրային սննդի կազմակ.և իրացում	160.0	140.0	87.5	160.0	120.0	75.0
ա/Համայն.տարած.ոգելից խմիչքի	80.0	70.0	87.5	80.0	60.0	75.0
բ/ ծխախոտի վաճառքի	80.0	70.0	87.5	80.0	60.0	75.0
բ/վառելիքաքսայուղերի վաճ.թույլ.	170.0	0	0	·200.0	368.4	184.2
Գովազդի տեղ. թույլտվություն	60.0	0	0	0	4.5	0
3.Պաշտոնական դրամաշնորհ.	**19292.0**	**19292.0**	100.0	**19292.0**	**19292.0**	100.0
3.1 Պետ. բյուջեից դոտացիա	**19292.0**	**19292.0**	100.0	**19292.0**	**19292.0**	100.0
4. Այլ եկամուտներ	**467.0**	**438.2**	**93.8**	**1574.0**	**1352.2**	**85.9**
Ինքնակամ շին. օրինականաց.	0	0	0	0	112.6	0
Աղբահանություն	0	0	0	1100.0	773.4	70.3
Վարձ. հողի վճար	460.0	433.2	94.2	460.0	437.2	95.0
Տեղական վճար	7.0	5.0	71.4	14.0	29.0	201.1
Ընդամենը վարչ. բյուջե	32564.0	33318.4	102.3	**33805.1**	**33987.2**	**100,5**

Տարեսկզբի ազատ մնացորդը եղել է ընդամենը 16081.6հազ. /տասնվեց միլիոն ութսունմեկ հազար վեց հարյուր դրամ, որն ուղղվել է համայնքի ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերին:

2018 թվականի ընթացքում հողի օտարումից համայնքի բյուջե է մուտքագրվել 5984.3 հազ. /հինգ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր/ դրամ:

2) Ծաղկունք համայնքի 2018թ. բյուջեի ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման և 2017 թ. նկատմամբ համեմատական վերլուծությունը
2018 թվականի ընդամենը բյուջեն կատարվել է ծախսեր 27509.6 հազ. /քսանյոթ միլիոն հինգ հարյուր ինը հազար վեց հարյուր/ դրամ, որը կազմում է բյուջեի 55.1 %-ը 2017թ. նույն ժամանակաշրջանում կատարվել էր ծախսեր 29062.1 հազ. /քսանինը միլիոն վաթսուներկու հազար մեկ հարյուր/ դրամ, այսինքն 70.9 %-ը:

N		Ծախսերի անվանումը	2017թ			2018թ		
Խումբ	Ենթախումբ		Տարեկան պլան	Փաստացի կատար.	%	Տարեկան պլան	Փաստացի կատար.	%
			հազ.դրամ	հազ.դրամ		հազ.դրամ	հազ.դրամ	
I		**Վարչական բյուջեի ընդամենը**	32564.0	28072.1	86.2	**33805.1**	**27261.5**	**80.6**
1		Տեղական ինքնակառավարում	22659.0	20682.1	91.2	23590.0	20611.1	**87.3**
2		Համայնքային այլ ծառայություններ	3000.0	1795.0	59.8	2770.0	750.0	**27.0**
3		Սոցիալական ապահովություն	2800.0	2800.0	100.0	2500.0	2500.0	**100.0**
4		Մշակույթ, սպորտ և կրոն	2300.0	1799.0	78.2	2291.1	2186.0	**95.4**
5		Աղբահանություն	996.0	996.0	100	1096.0	996.0	**90.8**
6		Գյուղատնտեսություն	0	0	0	260.0	218.4	**84.0**
		Պահուստային ֆոնդ	809.0	0	0.0	1298.0	0,0	**0,0**
II		**Ֆոնդային բյուջե**	8415.3	990.0	11.7	**16451.6**	**248.0**	**1.5**
	1	Շենքերի և շինությունների շինարարություն	0	0	0	13691.6	0	**0**
	2	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5500.0	0	0	1360.0	0	**0**
	3	Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	2915.3	990.0	34.0	1400.0	248.0	**17.7**
I+II		**Ընդամենը ծախսեր**	40979.3	29062.1	71.0	**50256.7**	**27509.5**	**54.7**

Ծաղկունք համայնքի 2018թ. ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ

1) Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման համար 2018 թվականի տարվա ընթացքում կատարվել է ծախսեր 20859.1 հազ. / քսան միլիոն ութ հարյուր հիսունինը հազ մեկ հարյուր դրամ, որից՝

- աշխատավարձ և այլ վարձատրություններ ՝ 18482,0 հազ./տասնութ միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար/ դրամ
- էներգետիկ և կապի ծառայությունների դիմաց ծախսեր 426,1 հազ. /չորս հարյուր քսանվեց հազար մեկ հարյուր/ դրամ
- համայնքապետարանի գույքի գնահատման ծառայության համար 150,0 հազ. /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:
- համակարգչային և տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախսեր 163,2 հազ. /մեկ հարյուր վաթսուներեք հազար/ դրամ

- համակարգիչների և պատճենահանման սարքերի քարթրիջների լիցքավորման և սարքերի վերանորոգման համար կատարվել է ծախս 110,0 հազ. /մեկ հարյուր տասը հազար/ դրամ
- գրասենյակային պիտույքներ 150,0 հազ. մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ
- տրանսպորտային նյութեր /բենզին/ ձեռք բերելու համար՝ 799,8 հազ. /յոթ հարյուր իննսունինը հազար ութ հարյուր/ դրամ
- հատուկ նպատակային այլ նյութեր /կենցաղային և տնտեսական ապրանքներ/ 300,0 հազ. /երեք հարյուր հազար/ դրամ
- նվիրատվություն Հայաստան համահայկական հիմնադրամին 30.0 հազ. /երեսուն հազար/ դրամ
- վարչական սարքավորումներ 248,0 հազ. /երկու հարյուր քառասունութ հազար/ /տեսախցիկներ տեղադրելու համար/

2) Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով կատարվել է ծախսեր 750,0 հազ. /յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ, որից

- գյուղամիջյան առուների և ճամփեզրերի մաքրում 450,0 հազ. /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ
- գիշերային լուսավորության անսարքությունները վերացնելու համար ծախսվել է 250,0 հազ. /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ
- կարկտակայանի համար հեղուկ գազի ձեռքբերում՝ 50,0 հազ. /հիսուն հազար/ դրամ

3) Գյուղատնտեսության գծով կատարվել է

- անասնաբույժի ծառայության վարձատրություն 218.4 հազ. /երկու հարյուր տասնութ հազար չորս հարյուր/ դրամ

4) Աղբահանության ոլորտում կատարվել է 996.0 հազ. /ինը հարյուր իննսունվեց հազար/ դրամ ծախս

5) Հանգիստ, մշակույթ և կրոն կատարվել է 2186.0 հազ. /երկու միլիոն մեկ հարյուր ութսունվեց հազար/ դրամ ծախս, որից

- սննդամթերք և հարակից նյութեր ձեռք բերելու համար ծախսվել է 850.0 հազ /ութ հարյուր հիսուն հազար/ դրամ
- մարտի 8-ի տոնին նվիրված նվերներ 600,0 հազ. /վեց հարյուր հազար/ դրամ
- վերջին զանգ համայնքի շրջանավարտների համար 150.0 հազ. /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ
- համայնքի 1-ին դասարան հաճախող երեխաներին դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքների հավաքածուներ 186,0 հազ. /մեկ հարյուր ութսունվեց հազար/ դրամ
- համայնքի երեխաներին ամանորյա նվերներ (տոպրակներ-հրուշակեղեն) 400,0 հազ. /չորս հարյուր հազար/ դրամ:

6) Սոց օգնությունների գծով համանքի ֆինանսապես անապահով ընտանիքներին տրամադրվե է դրամական օգնություն ընդամենը՝ 2500,0 հազ. /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ գումարի չափով:

Համայնքի ղեկավար՝ Դավիթ Կարապետյան